ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____»_____2022թ. **N--- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԻԼՆՅՈՒՍԻ ՓՈՂՈՑԻ Հ.64/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 159.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ 612.7 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0 քմ մակերեսով անավարտ բնակելի տունն ու դրա զբաղեցրած 612.7 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20062022-01-0230 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Միհրան Գասպարյանին, Լուսինե Չիլ-Գևորգյանին, Էվելինա Ղազարյանին, Գոռ Գասպարյանին և Էդմոնդ Գասպարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԻԼՆՅՈՒՍԻ ՓՈՂՈՑԻ Հ.64/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 159.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ 612.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0քմ մակերեսով անավարտ բնակելի տունն ու դրա զբաղեցրած 612.7քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20062022-01-0230 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Միհրան Գասպարյանին, Լուսինե Չիլ-Գևորգյանին, Գոռ և Էդուարդ Գասպարյաններին և Էվելինա Ղազարյանին:

Վերջիններս հանդիսանում են Էրիկ Գասպարյանի ընտանիքի անդամները, ով Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից է, հանդիսանում է ՀՀ ԶՈՒ սպա, պատերազմի ընթացքում ստացել է ականապայթյունային ծանր վիրավորում և 2020 թվականի նոյեմբերի 2-ին տեղափոխվել է հիվանդանոց՝ անգիտակից վիճակում: Ներկայումս Էրիկ Գասպարյանը ստացած վիրավորումների հետևանքով հանդիսանում է 1-ին կարգի զինհաշմանդամ և գտնվում է անկողնային ծանր վիճակում:

Մինչև պատերազմը Էրիկ Գասպարյանը հանդիսացել է ընտանիքի միակ աշխատողը և ընտանիքը ներկայումս գտնվում է սոցիալապես ծանր վիճակում:

Երևան քաղաքի ավագանու սույն որոշմամբ Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0քմ մակերեսով անավարտ բնակելի տունն ու դրա զբաղեցրած 612.7քմ մակերեսով հողամասը ձևակերպվում է Էրիկ Գասպարյանի ընտանիքի անդամների անունով, քանի որ Էրիկը ստացած ծանր վիրավորումների հետևանքով փաստացի անգործունակ է, խաթարված է կենսական կարևոր օրգանների աշխատանքը:

Քննարկվող բնակելի տունը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20062022-01-0230 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն «Վիլնյուսի-36» համատիրության տրված տեղեկանքի՝ Էրիկ Գասպարյանը և ընտանիքի 5 անդամները 2008 թվականից բնակվում են քննարկվող հասցեում:

Գնահատելով Էրիկ Գասպարյանի կողմից հայրենիքին մատուցած ծառայությունները, մարտի դաշտում կատարած սխրանքները, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության գործում վերջինիս ցուցաբերած անձնազոհությունը և հաշվի առնելով վերջինիս ընտանիքի բնակարանային ծանր պայմանները՝ մշակվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ, որը ներկայացվում է Ձեր հաստատմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԻԼՆՅՈՒՍԻ ՓՈՂՈՑԻ Հ.64/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 159.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ 612.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0քմ մակերեսով անավարտ բնակելի տունը եվ դրա զբաղեցրած 612.7քմ մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով օտարելու (նվիրելու) մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԻԼՆՅՈՒՍԻ ՓՈՂՈՑԻ Հ.64/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 159.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ 612.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0քմ մակերեսով անավարտ բնակելի տունը եվ դրա զբաղեցրած 612.7քմ մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով օտարելու (նվիրելու) մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ